ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԼԻԶԻՆԳԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.	Լիզինգի առարկան	կոմբայն
		տրակտոր
		այլ գյուղատնտեսական տեխնիկա
2.	Տրամադրման շրջանակը	ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, համայնքները
3.	Արժույթը	ՀՀ դրամ
4.	Լիզինգի տոկոսադրույքը	տարեկան տոկոսադրույք՝ մինչև 14 տոկոս
5.	Լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման չափն	լիզինգի տոկոսադրույքը սուբսիդավորվում է այնպիսի չափաքանակով, որ լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 2 տոկոս, իսկ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի շրջանակում գրանցված գյուղատնտեսական կոոպերատիվների (լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեությունը (գոյությունը) դադարեցված լինելու կարգավիճակ չունեցող),Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների և զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ լիզինգառուի կողմից վճարման ենթակա լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս
6.	Կանխավճարը	լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով
7.	Լիզինգի մարման ժամկետը	կոմբայնների համար՝ 7-10 տարի
		տրակտորների համար՝ 5-6 տարի
		շարքացանների, հավաքիչ-մամլիչների համար՝ 3-6 տարի
		այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ 3 տարի
		տրակտորներ և այլ գյուղատնտեսական տեխնիկա միևնույն լիզինգառուին միաժամանակ լիզինգով տրամադրելու դեպքում՝ 5-6 տարի
8.	Դադարի շրջանը	Տարեկան մինչև 6 ամիս
9.	Լիզինգի առարկայի ապահովագրությունը	Լիզինգի առարկան լիզինգի պայմանագրի գործողության ընթացքում ֆինանսական կառույցի

		հաշվին ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից (կասկո)
10.	Սեփականության իրավունքի պետական գրանցման վճարը (պետական տուրք)	տրակտորների և կոմբայնների համար՝ 5000 դրամ
		այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար վճար չկա
11.	Ֆինանսական կառույցի կողմից մատուցվող ծառայության վճարը	մինչև 2 մլն դրամ (ներառյալ) արժեքով լիզինգի առարկայի համար՝ առավելագույնը 15000 դրամ
		2 մլն ՀՀ դրամը գերազանցող արժեքով լիզինգի առարկայի համար՝ առավելագույնը 20000 դրամ
12.	Սեփականության իրավունքի փոխանցման վճարը	տրակտորների և կոմբայնների համար՝ առավելագույնը 5000 դրամ
		այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ առավելագույնը 3000 դրամ